բորդ Նորոգուեցաւ միաբանից ջուր մատակարարող «Քանքան» անուանեալ աղբիւրը իւր 12 սաժէն երկայնութեամբ երկաթեայ խողովակներով։

Մայր Աթոռոյս նոր Տպարանը շինվում է Տաճարի արևելեան կողմում նորա արտաքին և ներքին պարսպների միջավայրում ճեմարանի մօտ. սա արդէն մօտ է վերջանալու. նորա հիմնական պատերի վերայ այժմ ձգվում են նորա կամարները։ Ամբողջ շինութիւնը քարուկրեայ է. հիմքը մի սաժենից աւելի գետնի խորութեան մէջ ամրացած. նորա մեծադիր երկու դրլխաւոր մուտքերը և լուսամուտները զարդարուած են գեղեցիկ ծաղկենկար փորուածքներով և դրուագներով։ Շինութեան երկայնութիւնը հիւսիսից հարաւ 51 արշ մի քառորդ, լայնութիւնը արևմուտքից արևելք 24 արշ. մի քառորդ և բարձրութիւնը 11 արշ. Այս շինութիւնը պարունակում է իւր մէջ ա. գրաշարանոց, բ. տպարան, գ. թուղթ թրջելու սենեակ, դ. ձուլարան, ե. սորա ամբարանոցը, զ. Տպարանական ժողովոյ խորհրդարանն ու գրագրանոցը, է. գրագարանը և ը. ընդարձակ նախագաւիթը, որ արևմտեան մուտքից ձգվում է մինչև արևելեան մուտքը։ Տպարանի մնացեալ կարևոր շինութիւնները պէտք է կառուցուին նորա արևելեան բագում։

ՀԱՇԻՒ ԵԼ ԵՒ ՄՏԻՑ

Հայաստանեայց բարեգործական ընկերութեան Թիֆլիզում ունեցեալ մասին 1-էց 1888 թ. յունվարի 1-ն 1889 թ.

ՄՈՒՏՔ.

Անցեալ տարուանից մնացած է՝

		Ր.	Կ.
1	Տոկոսաբեր արժէքներ ի դումարի	8768	84
2	Ընթացիք հաշիւ առեւտրական բանկում	2700	53

3 Ա. Ձեռն դրամ	74	64
Գումար	11544	1

Սոյն տարուայ մուտք.

1 Նուիրաբերութիւններ՝		
Պ. Կարապետ Մուրատեանից ի յիշատակ հանգուցեալ դստեր իւրոյ Գայիանէի մի հատ թիֆլիզ Ք. փոխառութեան տոմսակ արժողութեամբ	1000	
Պ. Բագրատ Ալիբէկեանից ի յիշատակ հանգուցեալ եղբօր իւրոյ Յարութիւնի	100	
Զեռամբ Շամքորեցւոյ եկեղեցւոյ միաբան Շմաւոն քահանայ Տէր Բարսեղեանց ի յիշատակ հանգուցեալ Նատալիայի Ղոնդախսազեանց	25	
Բարեկրօն կոյս Հռիփսիմէ Թայիրեանից	10	
Անպայտ անձինքներից	6	49
2. 159 իսկական անդամներից	954	
6 մշտական անդամներից	600	
3. Պարահանդիսից	872	
Ներկայացումից	225	
Պ. Քարամեանի դասախօսութիւնից	70	10
4. Տոկոսք ընթացիք հաշուից	58	60
» կտրօններից	458	14
5. Արդիւնք Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի՝		
Աշակերտուհիների ձեռագործի վաճառումից . . .	264	75
Ներսիսեան հոգեւոր դպրանոցի հոգաբարձութիւնից . .	19	
Աշակերտուհիներից ուսումնական պիտոյքների վճար . .	35	87
Կար ու ձեւի դպրոցի արդիւնք	314	45
Գումար	5013	40
Բոլորը	16557	41

Ելք.

1. Դիւանական եւ մանր ծախսեր	103	5
2. Նուիրատուութիւնք՝		
Յօդուտ երկու օրիորդների ուսման վարձ	75	
» Զրկինեանց եկեղեցւոյ ուսումնարանի . . .	50	
Զրօրհնէքին եւ Զատիկն բաժանուեցաւ չքաւոր ընտանեաց . .	207	
Օժանդակութիւն մասնաւոր անձանց	10	
3. Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութիւնը		
4. Սոյն դպրոցի շինութիւնը կրակից ապահովելու ծախսը . .	44	42
5. Կար ու ձեւի դպրոցի պահպանութիւնը	1359	45
Գումար	3956	57
Ընկերութիւնն ունի՝		
1. Տոկոսաբեր արժէքներ	10268	84
2. Ընթացիք հաշիւ աւեւտրական բանկում	1958	60

3. Առ ձեռն զանձարանում գանուումէ.	373	40
Ընդամէնն	12600	84
Բոլորն ի միասին	16557	41

Բացի սորանից Ընկերութիւնն ունի երեք հատ օսմանեան արծաթեայ դրամ եւ գպրոցական կահ կարասիք ու այլ իրեղէններ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԿԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

Նաւշեցի թեմական դպրանոցի նախկին հոգաբարձու և գանձապահ Պ. Նիկոլայ բէգ Աթաբէգեանց՝ հակառակ տրամադրութեան կանոնադրութեան դպրանոցին և հրահանգութեանց վիճակաւորին և թեմական Ատենի, առ ի յանձնելոյ ի տեսչութիւն և ի պահպանութիւն նախագահի հոգաբարձութեան Գեր. Առաջնորդի վիճակին՝ զամենայն դպրոցական գումարս և զհաշիւս եղեալս առ ինքն, մինչ ցընտրութիւն նորոգ հոգաբարձուաց՝ ըստ կոնդակի Վեհափառ Հայրապետի ազգիս, ի 14 փետր. Համար. 72. ինքնակամ ընդ նախկին պաշտօնակցի իւրոյ Պ. Իւզբաշեանցի՝ զայնոսիկ դրամն առաքեալ է ի պահեստ արքունի գանձարանական մասին Տփխիսու, յենեալ ի 15 և ի 16 յօդուածս կանոնադրութեան այնր դպրանոցի, ըստ զօրութեան որոց՝ չունի և ոչ մին ի հոգաբարձուաց իրաւունս՝ վարել ընդ դպրոցական գումարս ըստ կամաց, նոյնպէս և ոչ կազմելոյ զժողով հասարակութեան առանց գիտութեան և մասնակցութեան առաջնորդի վիճակին՝ նախագահի նորին։ Սոյն օրինակ ինքնակամ արարմամբք հասուցեալ են նիւթական զրկանս դպրանոցին, ընդ նմին և ինն հարիւր ռուբլի տոկոսիս դպրոցական գումարաց եղելոց ընդ գրաւականաւ առ բժիշկ Աթաբէգեանցն և պաշտօնակիցն նորա Իւզբաշեանց՝ թողեալ են անպահանջ ի պարտապանէն։

Սինոդն Ս. Էջմիածնի տեսեալ զայսպիսի անկանոն գործողու-